

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՏԵՂԵԿԱՏՎԱՅԼԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ, ՄԻԶՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
(1-ին մաս)

Անկախ Պետությունների Համագործակցության Տնտեսական խորհուրդը Համաձայնագրի մասնակից պետությունների Կառավարությունների (այսուհետ՝ Կողմեր) հանձնարարությամբ.

ձգտելով ունենալ իրենց ներդրումը իրավահավասար եւ փոխշահավետ հիմունքներով տնտեսական ինտեգրացման տեղեկատվական հիմքի ստեղծման գործում,

ելնելով տեխնոլոգիական պայմանների, սարքավորումային եւ ծրագրային միջոցների, պոտենցիալ օգտագործողների համար տեղեկության մատչելիությունն ապահովող հեռահաղորդակցման համակարգերի ստեղծման անհրաժեշտությունից,

համոզված լինելով, որ տեղեկատվայնացման բարձր արդյունավետություն ունեցող ժամանակակից համակարգերի եւ միջոցների լայն օգտագործումը տնտեսական եւ մշակութային զարգացման կարեւոր գործոն է, համաձայնեց ներքոհիշյալի մասին.

ՅՈՒՎԱԾ 1

Սույն Համաձայնագրի նպատակների համար ներքոհիշյալ տերմիններն ունեն հետեւյալ նշանակությունը.

պետական պատվիրատու - միջպետական ծրագրի մասնակից պետության գործադիր իշխանության մարմին (կամ այլ լիազորված կազմակերպություն), որը պատասխանատու է սույն Համաձայնագրին համապատասխան այդ պետության ստանձնած պարտավորությունների

կատարման համար,

տեղեկություն - անձանց, առարկաների, փաստերի, իրադարձությունների, երեւոյթների եւ գործընթացների մասին տվյալներ, անկախ դրանց գրանցման եւ ներկայացման ձեւից,

տեղեկատվայնացում - քաղաքացիների, պետական իշխանության մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, ձեռնարկությունների եւ կազմակերպությունների, հասարակական միավորումների իրավունքների իրականացման եւ տեղեկատվական կարիքների բավարարման համար լավագույն պայմանների ստեղծման կազմակերպչական սոցիալ-տնտեսական եւ գիտատեխնիկական գործընթաց՝ սույն Համաձայնագրի մասնակից պետությունների ազգային օրենսդրությամբ պահպանվող պետական, առետրային կամ այլ գաղտնիքներ չհանդիսացող տեղեկատվական պաշարների

ձեւավորման եւ օգտագործման հիման վրա,

տեղեկատվական համակարգ - փաստաթղթերի (փաստաթղթերի զանգվածներ) եւ տեղեկատվական տեխնոլոգիաների, այդ թվում՝ հաշվողական տեխնիկայի եւ տեղեկատվայնացման գործընթացներն իրականացնող կապի միջոցների օգտագործմամբ, կազմակերպչորեն կանոնակարգված ամբողջություն,

տեղեկատվական գործընթացներ - տեղեկության հավաքման, մշակման, կուտակման, պահպանման, որոնման եւ տարածման գործընթաց,

տեղեկատվական պաշարներ - տեղեկատվական համակարգերում (գրադարաններում, արխիվներում, ֆոնդերում, տվյալների բանկերում եւ տեղեկատվական այլ համակարգերում) փաստաթղթեր եւ փաստաթղթերի զանգվածներ, որոնք պատրաստված եւ համակարգված են օգտագործման համար հարմար եւ պիտանի ձեւով,

համակարգող - պետական պատվիրատուներից մեկը, որը փոխադարձ համաձայնությամբ

ապահովում է նրանց օպերատիվ փոխգործակցությունը միջպետական ծրագրերի

իրականացման ընթացքում, կազմակերպում է պետական պատվիրատուների միջև փոխադարձ

խորհրդակցությունները եւ տեղեկության փոխանակումը, միջպետական ծրագրերի իրականացման առանձին փուլերի օպերատիվ պլանների համաձայնեցումը, համագործակցության կատարելագործմանն ուղղված հանձնարարականների մշակումը, գիտահետազոտական եւ փորձարարական ստրուկտորական աշխատանքների միջանկյալ եւ վերջնական արդյունքների օգտագործումը, նախապատրաստում եւ միջպետական մարմիններին է ներկայացնում այդ ծրագրերի իրականացման մասին համաձայնեցված տեղեկություն:

Որպես միջպետական ծրագրի համակարգող կարող են հանդես գալ նաեւ միջազգային գիտահետազոտական կենտրոնները եւ գիտական կազմակերպությունները, անդրազգային ֆինանսաարդյունաբերական խմբերը եւ միջպետական մարմինները: Եթե միջպետական ծրագիրը բաղկացած է առանձին նախագծերից, որոնք ֆինանսավորվում են միջպետական ծրագրի համապատասխան մասնակից պետությունների կողմից, ապա նման նախագծերի համակարգողի դերը ստանձնում են այդ նախագծերի ազգային պետական պատվիրատուները,

միջպետական ծրագրեր - վերջնական արդյունքներով փոխկապակցված ծրագրեր, որոնք իրականացվում են գործունեության համաձայնեցված ոլորտներում ԱՊՀ մասնակից պետությունների համատեղ ջանքերով,

ստանդարտացում - գործունեություն, որն ուղղված է իրական գոյություն ունեցող կամ հնարավոր խնդիրների նկատմամբ համընդհանուր եւ բազմակի օգտագործման

համար դրույթներ սահմանելու միջոցով որոշակի բնագավառում կանոնակարգման լավագույն աստիճանի հասնելուն,

հավաստագրում - տեխնիկական եւ ծրագրային միջոցների համապատասխանության հաստատման ընթացակարգ, որի միջոցով արտադրողից (վաճառող, կատարող) եւ սպառողից

(գնորդ) անկախ կազմակերպությունը գրավոր սահմանում է արտադրանքի համապատասխանությունը սահմանված պահանջներին,

ԷԴԻ /Electronic Data Interchange (EDI) անգլերեն արտահայտության հապավումը/ - տեղեկատվական համակարգ, որն ապահովում է համաձայնեցված կառուցվածքով (ստանդարտով) գործնական տեղեկության փոխանցումը համընդհանուր ընդունված չափորոշիչների եւ տվյալների բառարանների օգտագործմամբ,

ԷԴԻՖԱԿՏ /Electronic Data Interchange for Administration, Commerce and Transport (EDIFACT) անգլերեն արտահայտության հապավումը/ - ԷԴԻ փաստաթղթի ՄԱԿ-ի միջազգային ստանդարտ, որը կիրառվում է կառավարման, առևտրի եւ տրանսպորտի համար:

ՅՈՒՐԱԿՐՈՒՄ 2

Սույն Համաձայնագիրը կարգավորում է տեղեկատվայինացման ոլորտում Կողմերի փոխհարաբերությունները, որոնք ուղղված են՝

տեղեկատվայինացման ոլորտում համագործակցության զարգացմանը եւ միջպետական տեղեկատվական փոխշահավետ փոխանակման ապահովմանը,

միջպետական ծրագրերի ձեւավորմանը եւ իրականացմանը,

սույն Համաձայնագրի մասնակից պետությունների տեղեկատվական պաշարների, նաեւ նրանց կողմից սույն Համաձայնագրի իրականացման արդյունքում ձեւավորված ընդհանուր տեղեկատվական պաշարների ձեւավորմանը, օգտագործմանը եւ պաշտպանությանը,

տեղեկատվական տեխնոլոգիաների եւ դրանց ապահովման միջոցների ստեղծմանը եւ օգտագործմանը,

տեղեկության եւ տեղեկատվական գործընթացներին մասնակցող Կողմերի իրավունքների պաշտպանությանը:

ՀՈԴՎԱԾ 3

Կողմերը անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում միջպետական ծրագրերի իրականացման համար պայմանների ստեղծման ուղղությամբ, որոնք նպաստում են սոցիալ-տնտեսական և գիտատեխնիկական փոխգործակցության արդյունավետ և որակյալ տեղեկատվական ապահովմանը:

ՀՈԴՎԱԾ 4

Կողմերն իրականացնում են համագործակցություն միջպետական ծրագրերի մշակման, համաձայնեցման և իրականացման ուղղությամբ: ԱՊՀ մասնակից պետությունների տեղեկատվայնացման ոլորտում համագործակցության միջպետական ծրագրերի ձեռնարկման առաջնային ուղղությունների բազային ցանկը բերվում է սույն Համաձայնագրի 1-ին հավելվածում, որը հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

ՀՈԴՎԱԾ 5

Տեղեկատվայնացման, տեղեկատվական շուկայի զարգացմանն ուղղված համատեղ միջոցառումների անցկացման ոլորտում համագործակցությունն իրականացվում է իրավահավասարության, փոխշահավետության և Կողմերի շահերը հաշվի առնելու հիման վրա:

ՀՈԴՎԱԾ 6

Կողմերը համագործակցություն են իրականացնում սույն Համաձայնագրի անբաժանելի մասը հանդիսացող ԱՊՀ մասնակից պետությունների տեղեկատվայնացման ոլորտում համագործակցության միջպետական ծրագրերի ձեռնարկման և իրագործման Կարգի (2-րդ հավելված) հիման վրա միջպետական ծրագրերի իրագործման գործում:

ՀՈԴՎԱԾ 7

Կողմերը տեղեկատվայնացման ոլորտում համագործակցությունը զարգացնում են հետևյալ հիմնական ուղղություններով.
միջպետական ծրագրերի մշակում և իրականացում,
տեղեկատվական պաշարների շուկայի, գործունեության համաձայնեցված ոլորտների ծառայությունների, տեղեկատվական համակարգերի, տեխնոլոգիաների, դրանց ապահովման միջոցների զարգացում,
համատեղ օգտագործման տեղեկատվական պաշարների ստեղծում,
տեղեկատվայնացման ոլորտում գիտատեխնիկական և արդյունաբերական փոխշահավետ համագործակցության իրականացում՝ հաշվի առնելով տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ժամանակակից համաշխարհային միտումները,
տեղեկատվական տեխնոլոգիաների ստեղծում,
տեղեկատվայնացման տեխնիկական միջոցների ազգային արտադրողների պաշտպանություն՝ հաշվի առնելով շուկայական հարաբերությունների պայմաններում սույն Համաձայնագրի յուրաքանչյուր մասնակից պետության ազգային օրենսդրությունը,
տեղեկատվական ծառայությունների համար փոխհաշվարկների և վճարումների մեխանիզմների և համակարգերի մշակում,
համակարգ մուտք գործող տեղեկատվական զանգվածների ազգային լեզուներով սինխրոն մեքենայացված թարգմանության ծրագրերի ստեղծման ուղղությամբ

աշխատանքների կատարում,

ՄԱԿ-ի ԷԴԻՖԱԿՏ միջազգային ստանդարտների հիման վրա հաղորդագրությունների էլեկտրոնային փոխանակման համակարգի ձեւավորում,

գործունեության համաձայնեցված ոլորտներում տեղեկատվական ռեսուրսների պաշտպանություն,

տեղեկատվայնացման տեխնիկական եւ ծրագրային միջոցների ստանդարտացում,
տեղեկատվայնացման տեխնիկական եւ ծրագրային միջոցների հավաստագրում,
տեղեկատվայնացման ոլորտում նորմատիվ իրավական կարգավորման ներդաշնակեցում,
տեղեկատվական ոլորտում ապահովագրման շուկայի ստեղծում եւ զարգացում՝
տեղեկության կորստի, գողության, աղավաղման, արտահոսքի, կեղծման եւ փակման
հետեւանքով տեղեկատվական պաշարների սեփականատերերին, տիրապետողներին եւ
օգտագործողներին, համակարգերին եւ տեխնոլոգիաներին հասցված ֆինանսական վնասի
փոխհատուցման նպատակով,

միջպետական ծրագրերի նախագծերի մշակման ու իրագործման համար ներդրումների
ներգրավում եւ խթանման մեխանիզմների օգտագործում,

տեղեկատվության արդյունաբերության մարկետինգ,

տեղեկատվայնացման բնագավառում որակյալ մասնագետների պատրաստում:

ՅՈՒՐԱԾ 8

Կողմերը զարգացնում են համագործակցությունը հետեւյալ ձեւերով.

տեղեկության փոխանցման ազգային ցանցերի ստեղծման եւ զարգացման ուղղությամբ
տեխնիկական փոխգործակցության իրականացում եւ ազգային եւ միջազգային
տեղեկատվական պաշարների մատչելիությանն ուղղված տեղեկատվական
ծառայությունների

տրամադրում՝ հարմար ձեւով, մատչելի գնով եւ երաշխավորված որակի,

աջակցություն տվյալների եւ տեղեկատվական պաշարների փոխանցման ազգային
ցանցերի ձեւավորմանը եւ զարգացմանը,

տեխնիկական փաստաթղթերի եւ գիտատեխնիկական տեղեկության փոխշահավետ
փոխանակում, այդ թվում՝ այնպիսի փաստաթղթերի, որոնք վերաբերում են
տեղեկատվայնացման ոլորտում սույն Համաձայնագրի մասնակից պետությունների
քաղաքականության ձեւավորմանը եւ իրականացմանը,

փոխգործակցության իրականացում գիտահետազոտական եւ
փորձարարական ստրուկտուրական աշխատանքների ոլորտում՝ ներգրավելով սույն
Համաձայնագրի մասնակից պետությունների մասնագետներին,

աջակցություն նոր տեղեկատվական տեխնոլոգիաների յուրացման աշխատանքներ
կատարող համատեղ կազմակերպությունների, միավորումների, ձեռնարկությունների եւ
ֆիրմաների ստեղծմանը,

փոխգործակցության իրականացում սույն Համաձայնագրի մասնակից պետությունների
տեղեկատվական անվտանգության համակարգի կատարելագործման ուղղությամբ,

տեղեկատվայնացման համակարգերի ու միջոցների եւ հաշվողական տեխնիկայի
փոխադարձ ձեռքբերման, ընդլայնմանն ուղղված գործնական միջոցառումների մշակում
եւ իրագործում:

ՅՈՒՐԱԾ 9

Միջպետական ծրագրերի պատրաստման եւ իրագործման ուղղությամբ Կողմերի
համագործակցությունն իրականացվում է համաձայնագրի կնքմամբ, որում ամրագրվում
են Կողմերի՝ ծրագրի շրջանակներում փոխգործակցության պայմանները:

ՅՈՒՐԱԾ 10

Տեղեկատվայնացման ոլորտում փոխգործակցության մասին պայմանագրեր կնքելիս
սույն համաձայնագրի մասնակից պետությունների տնտեսվարող սուբյեկտները

ղեկավարվում են իրենց պետությունների ազգային օրենսդրությամբ:

ՀՈԴՎԱԾ 11

Մի Կողմի մյուս Կողմից ստացած ցանկացած տեղեկությունը, բացառությամբ՝ բաց տեղեկության, նյութերը, ծրագրային եւ տեխնիկական միջոցները չեն կարող փոխանցել որեւէ մեկին առանց այն Կողմի նախնական գրավոր համաձայնության, որից դրանք ստացվել են:

Տվյալ դրույթը խախտած Կողմը միջազգային իրավունքի նորմերին համապատասխան պատասխանատվություն է կրում:

ՀՈԴՎԱԾ 12

Կողմերն ապահովում են համատեղ աշխատանքների այն արդյունքների նկատմամբ մտավոր սեփականության իրավունքների արդյունավետ պաշտպանությունը, որոնք ստացվել են գիտատեխնիկական տեղեկության միջպետական ծրագրերն իրագործելիս: Այն տեղեկության, որը այդ աշխատանքների ընթացքում մի Կողմը տրամադրում է մյուս Կողմին՝ իրենց ազգային օրենսդրությանը, ինչպես նաեւ միջազգային պայմանագրերի (որոնց մասնակից են Կողմերը) դրույթներին համապատասխան:

Որեւէ Կողմի սեփականություն հանդիսացող տեղեկատվական պաշարների մատչելիության ապահովումը մյուս Կողմերի համար իրականացվում է միայն տեղեկատվական պաշարների սեփականատեր Կողմի թույլտվությամբ: Կողմերը համատեղ մշակում են վերոհիշյալ տեղեկատվական պաշարների մատչելիության ապահովման սկզբունքներն ու մեխանիզմները:

ՀՈԴՎԱԾ 13

Կողմերը նպաստում են միջպետական ծրագրերի ֆինանսավորման հարցերի լուծման ուղիներ գտնելուն:

Միջպետական ծրագրերի մշակման եւ իրագործման աշխատանքների ֆինանսավորումն իրականացնում են Կողմերը՝ հաշվի առնելով նրանց ֆինանսական հնարավորություններն ու շահագրգռվածությունը:

ՀՈԴՎԱԾ 14

Սույն Համաձայնագրի կատարումը համակարգելու համար պատասխանատու իրավասու մարմինները սույն Համաձայնագրի մասնակից պետությունների ազգային մարմիններն են, որոնք համակարգում են տեղեկատվական պաշարների եւ տեղեկատվական համակարգերի զարգացման հարցերը:

ՀՈԴՎԱԾ 15

Կողմերը նպաստում են այդ ծրագրերի նախագծերի մշակմանը եւ դրանց իրականացմանը մասնակցող տնտեսավարող սուբյեկտների համար առավել ընդունելի պայմաններ ստեղծելուն՝ նրանց կողմից համատեղ գիտահետազոտական եւ փորձարարական ստրուկտորական աշխատանքներ կատարելիս, տեղեկատվականացման միջոցների եւ համակարգերի փոխադարձաբար ձեռքբերելիս եւ գիտատեխնիկական փաստաթղթեր փոխանակելիս:

ՀՈԴՎԱԾ 16

Սույն Համաձայնագիրը չի շոշափում միջազգային այլ պայմանագրերով (որոնց մասնակիցներն են Կողմերը) Կողմերի ստանձնած իրավունքներն ու

պարտավորությունները:

ՀՈԴՎԱԾ 17

Սույն Համաձայնագրում Կողմերի ընդհանուր համաձայնությամբ կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ, որոնք ձեւակերպվում են արձանագրություններով:

Արձանագրություններն ուժի մեջ են մտնում բոլոր Կողմերի հետ համաձայնեցնելուց հետո՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու կարգով, ինչպես սահմանված է Համաձայնագրի 22-րդ հոդվածով:

ՀՈԴՎԱԾ 18

Մի Կողմից մյուս Կողմին փոխանցվող ամբողջ տեղեկությունը կթարգմանվի ռուսերեն եւ, նրանց փոխադարձ համաձայնությամբ, այն Կողմի /Կողմերի/ պետական լեզվով, որը ստանում է տեղեկություն՝ ռուսերեն տողատակային թարգմանությամբ:

ՀՈԴՎԱԾ 19

Սույն Համաձայնագրի կիրառման եւ մեկնաբանման հետ կապված բոլոր վիճելի հարցերը լուծվում են սույն Համաձայնագրի շահագրգիռ մասնակից պետությունների իրավասու մարմինների միջեւ բանակցությունների եւ խորհրդակցությունների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 20

Կողմերը սույն Համաձայնագրի ստորագրումից վեց ամիս հետո տեղեկացնում են Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր կոմիտեին տեղեկատվական պաշարների եւ տեղեկատվական համակարգերի զարգացման հարցերն համակարգելու համար

պատասխանատու մարմինների մասին:

Կողմերը նաեւ որոշում են փոխհամաձայնեցված միջպետական ծրագրերն իրականացնող համակարգողին:

ՀՈԴՎԱԾ 21

Սույն Համաձայնագիրը բաց է դրա սկզբունքները եւ նպատակները կիսող այլ պետությունների կողմից միանալու համար, բոլոր Կողմերի համաձայնությամբ, նման միանալու մասին փաստաթղթերն ավանդապահին հանձնելու միջոցով: Միացող պետության համար սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում նման միանալուն համաձայն լինելու մասին վերջին հաղորդագրությունը ավանդապահի կողմից ստացվելու օրվանից:

ՀՈԴՎԱԾ 22

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրող Կողմերի կողմից Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու մասին երրորդ ծանուցագիրը ավանդապահին ի պահ հանձնելու պահից:

Անհրաժեշտ ընթացակարգերն ավելի ուշ կատարած Կողմերի համար Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան փաստաթղթերը ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից:

ՀՈԴՎԱԾ 23

Սույն Համաձայնագիրը գործում է ուժի մեջ մտնելու օրվանից հինգ տարվա

ընթացքում: Այդ ժամկետը լրանալուն պես Համաձայնագիրն ինքնին կերկարաձգվի ամեն անգամ հնգամյա ժամանակահատվածով, եթե Կողմերը ընդհանուր համաձայնությամբ Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու մասին որոշում չկայացնեն:

ՀՈԴՎԱԾ 24

Յուրաքանչյուր Կողմ կարող է դուրս գալ սույն Համաձայնագրից՝ այդ մասին դուրս գալուց ոչ ուշ, քան վեց ամիս առաջ գրավոր ծանուցում ուղարկելով ավանդապահին՝ նախապես կարգավորելով սույն Համաձայնագրի գործողության ընթացքում ծագած ֆինանսական եւ այլ պարտավորությունները:

Կատարված է Մոսկվա քաղաքում 1999 թվականի դեկտեմբերի 24-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր կոմիտեում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած յուրաքանչյուր Կողմին կուղարկի Համաձայնագրի հաստատված պատճենը:

Հավելված 1
Տեղեկատվանագման ոլորտում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների տեղեկատվական պաշարների եւ համակարգերի ձեւավորման, միջպետական ծրագրերի իրականացման գործում համագործակցության մասին 1999 թվականի դեկտեմբերի 24-ի՝ Համաձայնագրին կից

ԱՊՅ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԶԵՎԱԿՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑԱՆԿԸ

h/h	Մշակվող ծրագրերի անվանումը		Կատարողները	Սպասվող արդյունքները թղթերի		Փաստա-
				ներկա-		
				յացման		
				ժամկետը		
1	2	3	4	5		
1.	Ազատ առևտրի գոտու	ԱՊՅ Գործադիր	Ենթադրվում է	2000-		
	տեղեկատվական	կոմիտե, ԱՊՅ	պետություններում	2002թթ.		
	ապահովում	վիճակագրական	ստեղծել	Էլեկտրոնային		
		կոմիտե, ՄԾՂԽ,	առևտրի ազգային			
		ԱՏԳՂԽ, ԿՏՀ եւ	կենտրոններ, որոնք			
		Համագործակցության	ի հիմնվում են			
		այլ շահագրգիռ	տեղեկությունների			
		մարմիններ	փոխանակման միջազգային			
			լափանիշների վրա			
			(ԷՂԻՖԱԿՏ):			
			Նման կենտրոնների			
			ստեղծումը եւ դրանց			
			միավորումը միջպետական			
			լցանցի մեջ թույլ կտա			

			ապրանքների եւ		
			ծառայությունների		
			սպառողներին ու		
			արտադրողներին ապահովել		
			տեղեկատվական		
			ռեսուրսներով,		
			էականորեն խթանել		
			Համագործակցության		
			պետություններում		
			շուկայի		
			ենթակառուցվածքը:		
			Համագործակցության		
			իարկային եւ մաքսային		
			ծառայությունների համար		
			կստեղծվեն ինտեգրացված		
			տեղեկատվական		
			իամակարգեր, որոնք		
			կապահովեն բոլոր		
			իանգույցների եւ		
			ծառայությունների		
			գործունեությունը		
			լազգային օրենսդրության		
			իամապատասխան եւ		
			իսկողություն, որը		
			կբացառի եկամուտների		
			թաքցումը եւ այլ		
			չարաշահումներ:		
			էնթադրվում է ստեղծել		
			իրավական		
			տեղեկատվության,		
			մաքսային		
			վիճակագրության,		
			բորսային		
			տեղեկատվության եւ		
			իամաշխարհային գների		
			մասին տեղեկատվության,		
			ապրանքների		
			մատակարարողների եւ		
			սպառողների		
			դասակարգիչների		
			տեղեկատվական		
			իամակարգեր եւ		
			տվյալների շտեմարաններ:		
			Նախատեսվում է ստեղծել		
			Ժամանակակից վճարային		
			սարքավորումների		
			կիրառումը ապահովող		
			միջբանկային		
			իաշվարկների համակարգ,		
			միջազգային		
			չափանիշներին		
			իամապատասխանող		
			միջբանկային		
			իաշվարկների համար		

			կգարգանան եւ կկիրառվեն	
			լավտոմատացված	
			տեղեկատվական	
			իամակարգեր բոլոր	
			կատեգորիաների եւ	
			ուղղությունների	
			բժշկական	
			իաստատությունների	
			իամալիր	
			տեղեկատվայնացման,	
			դիստանցիոն ախտորոշման	
			եւ	
			խորհրդատվությունների	
			ժամանակակից	
			տեխնոլոգիաների	
			ուղղությամբ,	
			իիվանությունների եւ	
			իամաճարակների տարածման	
			մասին տեղեկատվության	
			լայտատիվ փոխանակման	
			տարբեր	
			ուղղություններով	
			տվյալների առարկայական	
			շտեմարանների ստեղծում:	
			Մշակույթի ոլորտում	
			նախատեսվում է	
			կարգացնել ազգային եւ	
			միջազգային	
			էլեկտրոնային	
			թանգարանների եւ	
			պատկերասրահների եւ	
			Համագործակցության	
			պետությունների ազգային	
			մշակույթների	
			իարստությունների	
			էլեկտրոնային այլ	
			տեսակների ստեղծման	
			տեղեկատվական	
			իամակարգերը:	
			Ենթադրվում է	
			Համագործակցության	
			երկրների տեղեկատվական-	
			գրադարանային	
			փոխգործակցության	
			ընդլայնումը՝ դրանց	
			ռեսուրսների համատեղ	
			ծեւավորման եւ	
			լուստագործման	
			ուղղությամբ, ազգային	
			եւ միջազգային	
			էլեկտրոնային	
			թանգարանների եւ	
			պատկերասրահների	
			ստեղծման, ինչպես նաեւ	

		մշակույթի և արվեստի	
		վերաբերյալ տվյալների	
		միասնական շտեմարանի	
		ստեղծման բնագավառում	
		իամագործակցության	
		զարգացում:	
6.	Նորմատիվ-մեթոդական	ԱՊՀ Գործադիր	Ապահովագրման ծրագրերի 1999-
	իիմքի ստեղծում և կոմիտե, ԿՏՀ,	իրագործումը թույլ կտա	2002թթ.
	ԱՊՀ մասնակից	Ռուսաստանի կապի	ապահովել
	պետություններում	Նախարարություն և	Համագործակցության
	տեղեկատվական	Համագործակցության	պետությունների
	ռեսուրսների	այլ շահագրգիռ	ապահովագրության
	ապահովագրման	մարմիններ	շուկայի զարգացումը
	իամակարգի	և տեղեկատվական	
	ներդրմանն ուղղված	իամակարգերի	
	միջոցառումների	սեփականատերերի ու	
	անցկացում	օգտագործողների խախտված	
		գույքային շահերի	
		վերականգնման	
		երաշխիքները:	
7.	Համագործակցության	ԱՊՀ շահագրգիռ	Ենթադրվում է իրագործել 2000-
	մասնակից	մասնակից	ԱՊՀ ՏՓԱՀ
			2003թթ.
	պետությունների	պետություններ,	կատարելագործում և
	միջև տեղեկատվական	ԱՊՀ Գործադիր	զարգացում.
	փոխանակման	կոմիտե, ԱՊՀ	Համագործակցության
	ավտոմատացված	մասնակից	պետությունների պետական
	իամակարգի (ԱՊՀ	պետությունների	իշխանության մարմինների
	ՏՓԱՀ) և նրա	Միջխորհրդարանական	միջև և ԱՊՀ
	ենթահամակարգերի	վեհաժողով, ԱՊՀ	կանոնադրական
	կատարելագործում	մասնակից	մարմինների հետ, այդ
	և զարգացում	պետությունների	թվում ազատ առևտրի
		Սահմանապահ	զոտու ձեւավորման
		զորքերի	զործընթացում
		իրամանատարների	տեղեկատվական
		խորհուրդ, ԱՊՀ	փոխանակման
		մասնակից	կազմակերպման
		պետությունների	իամար կորպորատիվ
		ներքին գործերի	Intranet ցանցի
		Նախարարների	ստեղծման միջոցով,
		խորհուրդ, ԿՏԿԴԳ	Համագործակցության
		և	միջպետական
		Համագործակցության	տեղեկատվական ֆոնդերի
		այլ շահագրգիռ	ավելացում
		մարմիններ	(համապատասխան
			միջպետական
			իամաձայնագրերի
			ընդունման հետ մեկտեղ)
			և միավորված
			միջպետական ռեսուրսում
			դրանց ինտեգրացիայի
			միջոցով՝ ԱՊՀ ՏՓԱՀ
			արձանագրության կողմից

			լապահովելով հարմար		
			լսանկցավորված մուտք		
			լղեպի այդ		
			լտեղեկատվություն,		
			լԱՊՀ մասնակից		
			լպետությունների		
			լՍահմանապահ գորքերի		
			լմիջեւ տեղեկատվական		
			լփոխանակման		
			լենթահամակարգի		
			լստեղծում (ԱՊՀ ՍՁ ԱԵ),		
			լ"Ատլաս-ԱՊՀ" տվյալների		
			լփոխանցման		
			լմուլտիարձանագրային		
			լ(X.25, IP, FR) ցանցի		
			լստեղծում, որը		
			լհանդիսանում է ԱՊՀ ՏՓԱՀ		
			լմիասնական		
			լհեռահաղորդակցական հիմք		
			լեւ ծածկագրված		
			լփաստաթղթավորված կապի		
			լհամակարգ, շարունակել		
			լօգտագործել ՀՏ-ինֆորմ		
			լորպես		
			լհեռահաղորդակցական		
			լմիջավայր, "Ատլաս-ԱՊՀ"		
			լԷլեկտրոնային փոստի		
			լմիասնական համակարգի		
			լստեղծում		
			լՀամագործակցության		
			լպետությունների պետական		
			լիշխանության մարմինների		
			լմիջեւ եւ ԱՊՀ		
			լկանոնադրական		
			լմարմինների հետ		
			լտեղեկատվական		
			լփոխանակման		
			լկազմակերպման համար		
			լ(ԱՊՀ ՏՓԱՀ		
			լօգտագործողների եւ		
			լծածկագրված		
			լփաստաթղթավորված կապի		
			լհամակարգի միջեւ),		
			լԱՊՀ ՏՓԱՀ այլ		
			լենթահամակարգերի		
			լստեղծում՝ համապատասխան		
			լմիջպետական		
			լհամաձայնագրեր		
			լընդունելու հետ մեկտեղ՝		
			լԱՊՀ ՏՓԱՀ-ում իրացվող		
			լնմուշային որոշումների		
			լեւ տեխնոլոգիաների		
			լհիման վրա:		

"Կատարողներ" աղյուսակում շարադրված հապավումների պարզաբանումը՝

ՀՏԽ՝ Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների տրանսպորտի նախարարների համակարգող տրանսպորտային խորհրդակցություն, ՄԱԿ՝ Միջպետական ավիացիոն կոմիտե,

ՍՄԽ՝ Ստանդարտացման, չափաբանության եւ հավաստագրման միջպետական խորհուրդ,

ՄԷԽ՝ Միջպետական Էկոլոգիական խորհուրդ,

ԿՏՀ՝ Կապի բնագավառում տարածաշրջանային համագործակցություն,

ԱՊՀ ԵՏԽ՝ Համագործակցության մասնակից պետությունների երկաթուղային տրանսպորտի գծով խորհուրդ,

ԱՏԳՂԽ՝ Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների արտաքին տնտեսական գերատեսչությունների ղեկավարների խորհուրդ,

ՄԾՂԽ՝ Համագործակցության մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհուրդ,

ԱՊՀ Վիճակագրական կոմիտե՝ Անկախ Պետությունների Համագործակցության միջպետական վիճակագրական կոմիտե,

ԿՏԿԴԳ՝ Ռուսաստանի Դաշնության Նախագահին առընթեր կապի եւ տեղեկատվության դաշնային կառավարական գործակալություն:

ԻՐՏԵԿ - շարունակությունը հաջորդ մասում

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՏԵՂԵԿԱՏՎԱՅԻՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ, ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
(2-րդ մաս)

Հավելված 2

Տեղեկատվայնացման ոլորտում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների տեղեկատվական պաշարների եւ համակարգերի ձեւավորման, միջպետական ծրագրերի իրականացման գործում համագործակցության մասին 1999 թվականի դեկտեմբերի 24-ի՝ Համաձայնագրին կից

ԿԱՐԳ

ԱՊՀ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱՅԻՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ

1. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Տեղեկատվայնացման ոլորտում միջպետական ծրագրեր ձեւավորելիս եւ իրագործելիս Կողմերը ղեկավարվում են ազգային օրենսդրությամբ սահմանված կարգով եւ սույն Կարգով:

2. Տեղեկատվայնացման ոլորտում համագործակցության միջպետական ծրագրերը (այսուհետ՝ միջպետական ծրագրեր) ԱՊՅ մասնակից պետությունների՝ տեղեկատվայնացման գործընթացների եւ տեղեկատվական փոխգործակցության ապահովման

նկատմամբ համատեղ մոտեցումների մշակման գծով համագործակցության ձեւ են եւ կազմված են հետեւյալ բաժիններից.

հիմնահարցի բովանդակությունը եւ այն ծրագրային մեթոդներով լուծելու հիմնավորումը,

միջպետական ծրագրի հիմնական նպատակները եւ խնդիրները, իրագործման ժամկետները եւ փուլերը,

ծրագրային միջոցառումների համակարգը՝ անհրաժեշտության դեպքում ներառելով աշխատանքի տեղավորմանն ու նոր աշխատատեղերի ստեղծմանն ուղղված միջոցառումները,

միջպետական ծրագրի ռեսուրսային ապահովումը (բյուջետային միջոցների եւ/կամ արտաբյուջետային աղբյուրների հաշվին),

միջպետական ծրագրի իրագործման մեխանիզմը,

միջպետական ծրագրի կառավարման կազմակերպումը եւ դրա իրագործման ընթացքի համակարգումը,

միջպետական ծրագրի իրագործման արդյունավետության, սոցիալ-տնտեսական եւ էկոլոգիական հետեւանքների գնահատումը,

միջպետական ծրագրի անձնագիրը, որը պարունակում է դրա անվանումը, նշում շահագրգիռ Կողմերի համակարգողի մասին, ինչպես նաեւ նպատակները եւ խնդիրները, իրագործման ժամկետները, նշում հիմնական միջոցառումները կատարողների, ֆինանսավորման ծավալների եւ աղբյուրների, միջպետական ծրագրի իրագործման սպասվող վերջնական արդյունքների մասին,

յուրաքանչյուր միջպետական ծրագրի համար անհրաժեշտ է ապահովել բոլոր ծրագրային միջոցառումների համաձայնեցումը եւ դրանց իրականացման հերթականությունը՝ ֆինանսական ռեսուրսների նախատեսվող ծավալներով, ինչպես նաեւ ճյուղային եւ տարածաշրջանային խնդիրների լուծման համաձայնեցումը եւ համալիրությունը: Սոտակա մեկ-երկու տարիների համար պետք է կոնկրետացվեն ծրագրային միջոցառումները, դրանց ֆինանսավորումը, բիզնես-պլանները՝ սոցիալ-տնտեսական եւ տեխնիկատնտեսական հիմնավորումներով:

3. Միջպետական ծրագիրը կարող է ներառել այնպիսի նախագծեր, որոնք լրիվ կամ մասնակի կատարվում եւ ֆինանսավորվում են սույն Կարգի V բաժնով նախատեսված կարգով:

2. ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՆԱԳՐՑԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

4. Միջպետական ծրագրերի մշակման նախաձեռնողներ կարող են լինել Կողմերը, միջպետական եւ միջկառավարական մարմինները, ինչպես նաեւ ԱՊՅ մասնակից պետությունների շահագրգիռ կազմակերպությունները եւ գերատեսչությունները:

5. Հիմնահարցի նախնական ընտրությունը կատարվում է տեղեկատվայնացման ոլորտում գործող միջպետական (միջկառավարական) մարմինների (այսուհետ՝ միջպետական մարմիններ) կողմից:

6. Յուրաքանչյուր Կողմը իրավունք ունի միջպետական մարմիններում իր ներկայացուցչի միջոցով հանդես գալ կոնկրետ միջպետական ծրագրի ձեւավորման մասին առաջարկությամբ:

Հիմնահարցի ծրագրային մշակման մասին առաջարկությանը կցվում են.

դրա ծագման պատճառների վերլուծությունը,

հիմնահարցի լուծման հնարավոր միջոցները, այն միջոցառումների առաջարկվող ցանկը, որոնք անհրաժեշտ է իրականացնել տեղեկատվայնացման, տեխնիկայի,

տեխնոլոգիաների, արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) արտադրության եւ իրացման, հիմնահարցի լուծման համար կազմակերպչական, աշխատանքային, տնտեսական

եւ իրավական հարաբերությունների ոլորտում, դրա իրագործման հնարավոր ժամկետները,

Ֆինանսական ռեսուրսների պահանջի հիմնավորումը՝ նշելով հնարավոր աղբյուրների ներգրավումը եւ միջպետական ծրագրի նախագծի իրագործումից սպասվող շահույթի բաշխումը,

միջպետական ծրագրի սոցիալ-տնտեսական արդյունավետության եւ իրագործման հետեւանքների նախնական գնահատումը, ծրագրային միջոցառումների համապատասխանությունը էկոլոգիական եւ այլ պահանջներին,

միջպետական ծրագրի պետական պատվիրատուների, մշակողների, հիմնական մատակարարների եւ կապալառուների ցանկը,

նշում միջպետական ծրագրի նախագծի պատրաստման ժամկետների եւ արժեքի մասին:

7. Միջպետական մարմինները անցկացնում են պետություններից միջպետական ծրագրերի նախագծերի գծով ստացված առաջարկությունների նախնական քննարկում եւ, հաշվի առնելով քննարկման ու նրանց շահագրգռվածության ուսումնասիրության արդյունքները, ձեւավորում են այդ ծրագրերը:

Միջպետական մարմինները Կողմերի շահագրգռվածության եւ ստացված նյութերի հիման վրա պատրաստում են միջպետական մակարդակով տվյալ հիմնահարցը լուծելուն ուղղված առաջարկություն եւ ներկայացնում են այն Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր կոմիտե /այսուհետ՝ Կոմիտե/:

8. Կոմիտեն միջպետական մարմինների միջպետական ծրագրերի նախագծերի ձեւավորման առաջարկությունը, ծրագրերի մշակման ժամկետները, ֆինանսավորման աղբյուրները սահմանված կարգով դնում է Անկախ Պետությունների Համագործակցության Տնտեսական խորհրդի քննարկմանը:

3. ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

9. Միջպետական մարմինները.

կատարելով Անկախ Պետությունների Համագործակցության Տնտեսական խորհրդի՝ միջպետական ծրագրի նախագծի ձեւավորման մասին որոշումը՝ կազմակերպում են դրանց մշակումը,

անցկացնում են Կողմերի՝ հիմնահարցի լուծմանը եւ նախագծերի գնահատմանն ուղղված առաջարկությունների հավաք,

Կոմիտե են ուղարկում միջպետական ծրագրի համաձայնեցված նախագիծը՝ բացատրական գրությամբ, սոցիալ-տնտեսական եւ տեխնիկատնտեսական հիմնավորումներով

բիզնես-պլանով եւ միջպետական ծրագրի մասին միջկառավարական համաձայնագրի նախագծով:

4. ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓՈՐՁԱԶՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

10. Կոմիտեն կազմակերպում է նախագծերի վերլուծությունը եւ գնահատումը /փորձաքննությունը/՝ ուշադրություն դարձնելով հետեւյալ հարցերի վրա.

դրա հիմնահարցի առաջնային բնույթը,

ծրագրային միջոցառումների հիմնավորվածությունը, համալիրությունը եւ էկոլոգիական անվտանգությունը, դրանց իրագործման ժամկետները,

դրա իրագործման համար առաջին հերթին արտաբյուջետային միջոցների ներգրավման նպատակահարմարությունը՝ կապակցված կենտրոնացված ռեսուրսների հաշվին պետական աջակցության եւ կատարող կազմակերպություններին տարբեր արտոնություններ տրամադրելու հնարավորության հետ,

միջպետական ծրագրի իրագործման մեխանիզմի արդյունավետությունը,

ծրագրի սոցիալ-տնտեսական արդյունավետությունը ամբողջությամբ, սպասվող

վերջնական արդյունքները եւ դրանց ազդեցությունը ԱՊՀ մասնակից պետությունների տնտեսության կառուցվածքային վերակառուցման գործընթացի վրա:

11. Միջպետական ծրագիրը հաստատվում է Անկախ Պետությունների Համագործակցության Կառավարությունների ղեկավարների Խորհրդի կողմից:

Կոմիտեն մասնակից պետությունների Կառավարությունների քննարկմանն է ուղարկում միջպետական ծրագրի եւ միջկառավարական համաձայնագրի նախագծերը: Միջպետական ծրագրի իրագործմանը մասնակցելու պայմանները եւ դրա ֆինանսավորման կարգը ձեւակերպվում են առանձին միջկառավարական համաձայնագրով, որը կնքվում է Կողմերի միջեւ նրանց մասնակցության կամավորության եւ փոխշահավետության հիման վրա, եւ որի ստորագրումից հետո այն ընդունվում է ֆինանսավորման եւ իրագործման:

5. ՄԻԶՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

12. Միջպետական ծրագրերի եւ հայեցակարգերի ձեւավորման աշխատանքների ֆինանսավորումը Կողմերի համաձայնությամբ իրականացվում է հաշվի առնելով նրանց ֆինանսական հնարավորությունները եւ շահագրգռվածությունը:

13. Միջպետական ծրագրի ֆինանսավորումը իրականացվում է մասնակից պետությունների միջպետական ծրագրի մասին միջկառավարական համաձայնագրին համապատասխան՝ մասնակիցների պետական բյուջեների հաշվին՝ այդ նպատակների համար

նախատեսված միջոցների սահմաններում, կամ շահագրգիռ նախարարությունների, գերատեսչությունների եւ այլ ճյուղային մարմինների ֆինանսավորման արտաբյուջետային աղբյուրների եւ/կամ նախագծի մասնակիցների կողմից ներգրավված աղբյուրների հաշվին, ինչպես նաեւ համակցված ֆինանսավորման հաշվին, այդ թվում՝ օտարերկրյա ներդրումների ներգրավմամբ: Միջպետական ծրագրի իրագործմանը օտարերկրյա կապիտալի ներգրավումն իրականացվում է օտարերկրյա ներդրումների մասին մասնակից պետությունների ազգային օրենսդրություններին համապատասխան:

14. Կողմերը միջպետական ծրագրերի ֆինանսավորման մեխանիզմը իրականացնում են հաշվի առնելով իրենց ֆինանսական հնարավորությունները եւ շահագրգռվածությունը:

Կողմերը ապահովում են միջպետական ծրագրի կազմի մեջ մտնող ծրագրի իրենց մասը ֆինանսական եւ այլ ռեսուրսներով:

6. ՄԻԶՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

15. Միջպետական ծրագրի իրագործման կառավարումը իրականացվում է այդ ծրագրի մասին մասնակից պետությունների միջկառավարական համաձայնագրին համապատասխան:

Միջպետական ծրագրի ժամանակին իրագործման, ծրագրի կատարողների աշխատանքների

կառավարման, ծրագրի իրագործման նպատակով հատկացվող միջոցների արդյունավետ օգտագործումն ապահովելու համար պատասխանատվությունը դրվում է ծրագրի համակարգողի վրա: Միջպետական ծրագրերի իրագործման արդյունավետությունն ապահովելու նպատակով յուրաքանչյուր Կողմ որպես պետական պատվիրատու սահմանում է

այդ ծրագրերի մասնակիցներին:

Որպես միջպետական ծրագրի համակարգող կարող են հանդես գալ միջպետական /միջկառավարական/ կազմակերպությունները:

Այն դեպքում, եթե միջպետական ծրագիրը կազմված է առանձին նախագծերից, որոնց իրագործումը ֆինանսավորվում է համապատասխան Կողմերի կողմից, այդպիսի նախագծերի

համակարգողի դերը կատարում են այդ նախագծերի ազգային պետական պատվիրատուները:

Անհրաժեշտության դեպքում, միջպետական ծրագրի համակարգողի լիազորությունները, Կողմերի միջեւ կնքված առանձին միջկառավարական

համաձայնագրին համապատասխան, կարող են պատվիրակվել ծրագրի աշխատանքները կատարող կազմակերպություններին եւ ձեռնարկություններին, ինչպես նաեւ մասնակից պետություններից մեկի տարածքի վարչական կառավարման մարմին:

16. Միջպետական ծրագրի իրագործումն իրականացվում է համակարգողի եւ մրցութային հիմքով որոշված աշխատանքները կատարող կազմակերպության միջեւ կնքված կոնտրակտների /պայմանագրերի/ հիման վրա:

17. Միջպետական ծրագրի կոնկրետ մասնակից Կողմերի միջեւ համատեղ աշխատանքների արդյունքների, այդ թվում՝ ապրանքների/ծառայությունների իրացումից ստացված եկամուտների բաշխումն իրականացվում է, որպես կանոն, համաձայն տվյալ ծրագրում նրանց բաժնային մասնակցության եւ որոշվում է միջկառավարական համաձայնագրում:

18. Միջպետական ծրագրերի իրագործման ամփոփումը քննարկվում են Կողմերի կողմից ծրագրի մասին միջկառավարական համաձայնագրի պայմաններին համապատասխան,

անհրաժեշտության դեպքում օգտագործելով անկախ փորձաքննություն:

19. Միջպետական ծրագրերի համակարգողների կողմից ներկայացվող հաշվետվությունների վերլուծության հիման վրա միջպետական մարմինները պատրաստում են Կոմիտե են ուղարկում ծրագրերի աշխատանքների եւ ֆինանսավորման շարունակման կամ դրանց դադարեցման մասին առաջարկություն:

Միջպետական մարմինների ներկայացմամբ միջպետական ծրագրերը կարող են լրացվել նոր ուղղություններով եւ նախագծերով՝ ծրագրի հաստատման կարգին համանման կարգով:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2001 թվականի հունիսի 7-ից: